ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«09» հունիսի 2026թ. No 3290-Ա

«ԲՈՒԺՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾ. ՄՈԴՈՒԼ 2՝ ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ. ՄԱՍ 1 ԵՎ ՄԱՍ 2» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Առողջապահության նախարարի 2019 թվականի ապրիլի 26-ի թիվ 20-Ն հրամանի հավելված 1-ի 15-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով «Գլոբալ Մեդ» ՍՊԸ տնօրեն Արուսյակ Բադոյանի 19.05.2026թ. հայտը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Հաստատել 2026 թվականից կրկնողաբար Երևան քաղաքում և առցանց («Զում» հարթակ) «Գլոբալ Մեդ» ՍՊԸ կողմից կազմակերպվող «Բուժքույրական գործ. մոդուլ 2՝ վարակի կանխարգելում և հսկողություն. մաս 1 և մաս 2» թեմայով դասընթացի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Բուժքույրական գործ. մոդուլ 2՝ վարակի կանխարգելում և հսկողություն. մաս 1 և մաս 2» թեմայով դասընթացի՝

1) մասնակիցներին շնորհել ՇՄԶ 18 տեսական և 7 գործնական կրեդիտ.

2) մաս 1-ի մասնակիցներին՝ ՇՄԶ 18 տեսական կրեդիտ,

3) մաս 2-ի մասնակիցներին՝ ՇՄԶ 7 գործնական կրեդիտ,

4) դասավանդողներ Ստելլա Սուջյանին՝ ՇՄԶ 12 տեսական և 7 գործնական կրեդիտ, Գենադի Պալոզյանին՝ ՇՄԶ 6 տեսական կրեդիտ:

3. Առողջապահության նախարարության քարտուղարության պետ Աստղիկ Առաքելյանին՝ եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը հայտատուին:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված վարչական վարույթի մասին» կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

09.06.2026

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
« 09 » հունիս 2026թ.
N 3290 - Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

# «ԲՈՒԺՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾ. ՄՈԴՈՒԼ 2՝ ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ. ՄԱՍ 1 ԵՎ ՄԱՍ 2» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2026թ.-ից կրկնողաբար, ք.Երևան և առցանց («Զում» հարթակ)

«Գլոբալ Մեդ» ՍՊԸ

| Մաս 1՝ առցանց | | |
|---|---|---|
| **Օր 1** | | |
| 1,5 ժամ | **Դասախոսություն**<br>Վարակի կանխարգելում և հսկողություն բուժքույրական պրակտիկայում | Գենադի Պալոյան |
| **Օր 2** | | |
| 1,5 ժամ | **Դասախոսություն**<br>Մուլտիմոդալ ռազմավարության հասկացություն և կիրառում | Գենադի Պալոյան |
| **Օր 3** | | |
| 1 ժամ | **Դասախոսություն**<br>Ձեռքերի հիգիենային ներկայացվող պահանջներ | Ստելլա Սուջյան |
| 1 ժամ | **Դասախոսություն**<br>Ախտահանիչ նյութերի շրջանառությունը ՀՀ-ում: Ախտահանիչ նյութերին ներկայացվող պահանջներ | Ստելլա Սուջյան |
| **Օր 4** | | |
| 1 ժամ | **Դասախոսություն**<br>Անհատական պաշտպանության միջոցներ | Ստելլա Սուջյան |
| 1,5 ժամ | **Դասախոսություն**<br>Թափոնների կառավարում | Ստելլա Սուջյան |
| **Օր 5** | | |
| 1 ժամ | **Դասախոսություն**<br>Բժշկական արտադրատեսակների ախտահանման և մանրէազերծման գործընթացներին ներկայացվող պահանջներ | Ստելլա Սուջյան |
| 1 ժամ | **Դասախոսություն**<br>Միզային կաթետերի նախապատրաստմանը, տեղադրմանը և հեռացմանը ներկայացվող պահանջներ | Ստելլա Սուջյան |
| **Օր 6** | | |
| 1,5 ժամ | **Դասախոսություն**<br>Ծայրամասային երակային կաթետերի (ԾԵԿ) նախապատրաստմանը, տեղադրմանը և հեռացմանը ներկայացվող պահանջներ | Ստելլա Սուջյան |
| **Օր 7** | | |
| 1,5 ժամ | **Դասախոսություն**<br>Սրածայր գործիքներով պատահական վնասման և արյան ցայտման կանխարգելմանը ներկայացվող պահանջներ:<br>Անվտանգ ներարկումներ: Դեպքերի արձանագրում և հաղորդում: Միջոցառումների ալգորիթմ | Ստելլա Սուջյան |
| 1 ժամ | **Դասախոսություն**<br>Շնչառական հիգիենա և հազալու էթիկետ: Անհատական հիգիենա | Ստելլա Սուջյան |
| **Օր 8** | | |
| 1,5 ժամ | **Դասախոսություն**<br>Պացիենտի և խնամակալի ուսուցանում ՎԿՀ տարբեր ասպետների | Ստելլա Սուջյան |
| 1,5 ժամ | **Դասախոսություն**<br>ՎԿՀ հարցերով իրազեկում և ուսուցանում աշխատանքի ընդունվելիս և աշխատանքի ընթացքում | Գենադի Պալոյան |
| **Օր 9** | | |
| 1,5 ժամ | **Դասախոսություն**<br>ՎԿՀ առանձնահատկությունները բժշկության տարբեր ոլորտներում (մանկաբարձագինեկոլոգիական, ատամնաբուժական և ԱԱՊ օղակ) | Գենադի Պալոյան |
| **Մաս 2՝ առկա** | | |
| **Օր 10** | | |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Ձեռքերի հիգիենայի ճիշտ կատարման ճիշտ տեխնիկա, մշտադիտարկման իրականացում, հարցաշարերի լրացում և գնահատում | Ստելլա Սուջյան |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Ախտահանիչ նյութերի պատրաստման, պահպանման, պիտակավորման պահանջների մշտադիտարկում և վերահսկողություն | Ստելլա Սուջյան |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>ԱՊՄ-ների կիրառում տարբեր իրավիճակներում: «Ձեռնոցների բուրգ» | Ստելլա Սուջյան |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Թափոնների տեսակավորում, գրանցումների իրականացում, ժամանակավոր և մշտական պահման տարածքներ, թափոնների տեղափոխում | Ստելլա Սուջյան |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Բժշկական արտադրատեսակների տեսակավորում, մանրէազերծման գործընթացների կատարման ճիշտ տեխնիկա, գրանցումների իրականացում | Ստելլա Սուջյան |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Միզային կաթետերի նախապատրաստման, տեղադրման և հեռացման ճիշտ կատարում և հարակից հարցերի քննարկում (ասեպտիկայի կանոններ, թափոնների կառավարում) | Ստելլա Սուջյան |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>ԾԵԿ-ի նախապատրաստման, տեղադրման և հեռացման ճիշտ կատարում և հարակից հարցերի քննարկում | Ստելլա Սուջյան |

| | | |
|---|---|---|
| | (շարժական սեղանիկ, ասեպտիկայի կանոններ, թափոնների կառավարում) | |

Թիրախային լսարան՝ բուժքույրեր, բուժակներ, մանկաբարձուհիներ, լաբորանտներ:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ մինչև 50 հոգի:

Գործնական մասը ներառում է՝ պրակտիկ խնդիրների լուծում, սիմուլյացիոն վարժանքներ, ծրագրերի և ստուգաթերթերի կազմում: